

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ» ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) **33**-րդ հոդվածին և «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին»

(այսուհետ՝ կանոնակարգ) Երևան քաղաքի ավագանու **18.06.2009**թ. թիվ **1**-Ն որոշման հավելվածի **53**-րդ կետի **1**) ենթակետին համապատասխան՝ Երևան քաղաքի ավագանու որոշումների նախագծերի և կանոնակարգով իրեն վերապահված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Երևան քաղաքի ավագանուն եզրակացություններ տալու, ինչպես նաև ավագանու անունից վերահսկողություն իրականացնելու նպատակով:

1.2 Հանձնաժողովը Երևան քաղաքի ավագանու մարմին է և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի հանրապետության սահմանադրության, « Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի, սույն կանոնակարգերի պահանջների համապատասխան:

1.3 Սույն կանոնակարգով սահմանվում է հանձնաժողովի կազմավորման կարգը, հիմնական խնդիրները, լիազորությունները, աշխատանքի կազմակերպումը, գործունեության ընթացակարգը:

1.4 Հանձնաժողովի կազմը ձևավորվում է ավագանու անդամներից:

1.5 Հանձնաժողովը ունի հետևյալ կազմը՝

ա) Հանձնաժողովի նախագահ,

բ) Հանձնաժողովի նախագահի տեղակալ,

գ) հանձնաժողովի անդամներ:

1.6 Հանձնաժողովի նախագահը և տեղակալը ընտրվում են ավագանու նիստում՝ օրենքով և կարգով սահմանված կարգով:

1.7 Հանձնաժողովի կազմը հաստատվում է քաղաքապետի որոշմամբ:

1.8 Հանձնաժողովը կազմավորված է խմբակցությունների հատկացված տեղերի թվաքանակի համապատասխան:

2. Հանձնաժողովի խնդիրները և լիազորությունները

2.1. Հանձնաժողովի խնդիրներն են.

- ա) ուսումնասիրել քաղաքացիներից ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները՝ քննարկել և դրանց վերաբերյալ կարծիք ներկայացնել պատկան մարմիններին և տեղեկացնել դիմումատուին,
- բ) ուսումնասիրել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ կառավարության և ՀՀ գործադիր մարմինների օրենսդրական այն նախաձեռնությունները, որոնք առնչվում են Երևան քաղաքի կառավարմանը և դրանց վերաբերյալ կարծիք ներկայացնել,
- գ) առաջարկություններ ներկայացնել օրենսդրության կատարելագործման ու լրամշակման վերաբերյալ՝ համայնքի բնակիչների իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման, երեխայի իրավունքների պահպանության, կրոնի, գենդերային հարցերի, Երևանի հասարակական կարգի պահպանության հետ կապված և այլ հարցերով:

2.2. Հանձնաժողովի լիազորություններն են.

- 1) Երևանի ավագանու, քաղաքապետի, քաղաքապետարանի աշխատակազմի իրավական ակտերի ուսումնասիրում և գործող օրենսդրությանը դրանց համապատասխանեցում,
- բ) Երևանին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունների նախագծերի մշակում և առաջադրում, շրջանառության մեջ դրված օրենսդրական նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- գ) օրենսդրական նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դ) հասարակական կարգի պահպանում,
- ե) օրենքով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորությունների իրականացում:

3. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

3.1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը անց են կացվում Երևան քաղաքի ավագանու կանոնակարգին համապատասխան առնվազն ամիսը մեկ անգամ՝ Հանձնաժողովի սահմանված օրերին և ժամերին:

3.2. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

3.3. Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողների սահմանված ժամկետում և օրակարգով: Արտահերթ նիստի օրակարգը չի հաստատվում:

3.4. Հերթական նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում: Օրակարգի հաստատումից հետո ներկայացվում են հարցերն՝ ըստ հաջորդականության, քննարկվում և մտքերի փոխանակումից հետո դրվում քվեարկության, այդ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:

3.5. Հանձնաժողովը իր կազմից որոշում է Երևան քաղաքի ավագանու նիստում հարակից գեկուցողին:

3.6. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին ներկա անդամների մեծամասնությունը, բայց ոչ պակաս քան մեկ քառորդը: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

3.7. Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև Երևանի քաղաքապետը կամ նրա առաջին տեղակալը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել նաև նախաձեռնության հեղինակ ավագանու անդամը (անդամները):

3.8. Նիստերն արձանագրվում են Հանձնաժողովի քարտուղարի, իսկ նրա բացակայությամբ՝ ներկա անդամներից որևէ մեկի կողմից: Նիստի արձանագրությունը, որը ներառում է նաև Հանձնաժողովի նիստում քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների անվանական արդյունքները (անհատական ստորագրություններով), ստորագրում է Հանձնաժողովի նախագահը:

3.9. Հանձնաժողովը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աջակցությամբ կազմակերպում է Հանձնաժողովի կազմակերպչական, փաստաթղթային, տեղեկատվական, վերլուծական և մասնագիտական գործունեությունը,

3.10. Ամփոփում է Երևանի ավագանու և քաղաքապետարանի աշխատակազմի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները և կայացնում է համապատասխան որոշում՝ օրենքների և այլ իրավական փաստաթղթերի համապատասխանության կամ անհամապատասխանության մասին,

3.11. Անհրաժեշտության դեպքում քննարկում է Երևանի քաղաքապետարանի գործունեության հետ կապված դատական վեճերի հանգուցալուծման տարբերակները,

3.12. Հանձնաժողովն իր կազմից կարող է ձևավորել աշխատանքային խումբ՝ սահմանելով նրա խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը՝ ընտրելով նրա ղեկավարին: Աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել նաև խմբակցության փորձագետներ: Աշխատանքային խմբի գործունեությունը համակարգում է Հանձնաժողովի նախագահը: Իր գործունեության արդյունքների մասին աշխատանքային խումբը սահմանված ժամկետում գեկուցում է Հանձնաժողովի նիստում:

3.13. Հանձնաժողովն իր նիստին կարող է հրավիրել քննարկվող հարցին առնչվող Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3.14. Քաղաքապետը, Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, վարչական շրջանների ղեկավարները, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարները Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդ պահանջով պարտավոր են Հանձնաժողովին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր

ու տեղեկանքներ, բացառությամբ՝ Օրենսդրությամբ նախատեսված գաղտնիք համարվող տեղեկություններին:

3.15. Ընդունում է որոշումներ բաց քվեարկության միջոցով:

3.16. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են և հրապարակային: Հանձնաժողովի նիստերը ձայնագրվում են և արխիվացվում:

4. Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը

4.1. Հանձնաժողովի նախագահը.

ա) Նախապատրաստում և վարում է Հանձնաժողովի նիստերը,

բ) Հանձնաժողովի նախագահը հրավիրում է Հանձնաժողովի արտահերթ նիստ իր նախաձեռնությամբ՝ սահմանված ժամկետում և օրակարգով,

գ) Կազմակերպում է Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման աշխատանքները,

դ) Կազմակերպում է Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի Հանձնաժողովի անդամներին նախնական ծանուցումը՝ ուսումնասիրության կարծիք և եզրակացություն տալու համար,

ե) Հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին ամփոփում է Հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացված եզրակացությունները, որից հետո դրանք ներկայացնում է Հանձնաժողովի հաստատմանը,

զ) Իրականացնում է Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ հսկողությունը,

է) Ստորագրում է Հանձնաժողովի կողմից ընդունված փաստաթղթերը,

ը) Իրականացնում է օրենքով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

4.2. Հանձնաժողովի նախագահի տեղակալը Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում կամ նրա հանձնարարությամբ իրականացնում է Հանձնաժողովի նախագահի գործառույթները:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հանձնաժողովի կողմից հաստատվելու պահից:

5.2 Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն կանոնակարգում կարգավորվում են Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի հանրապետության օրենքով, Երևանի քաղաքի ավագանու կանոնակարգով:

5.3 Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն կանոնակարգում կանոնավորվում են Երևանի քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի հանրապետության օրենքով, Երևանի քաղաքի ավագանու կանոնակարգով:

5.4 Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է հանձնաժողովի որոշմամբ:

ՀԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՆՆԵՐ

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ